ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

<<ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան **_24_ _հունիսի_ _2019թ._**
ժամը _16[30]_

Մասնակցությամբ՝
Հանձնաժողովի նախագահ՝ **Լ. Դանիելյան (ԳՊ/ԳԱՊ)**
Հանձնաժողովի անդամներ՝ **Մ. Գրիգորյան (ԳՊ/ԳԱ)**
Ա. Հակոբյան (ԳՊ/ԳԱ)
Կ. Մկրտչյան (ԳՊ/ԲԱ)
Է. Միրոյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ **Գ. Ադամյան (ԳՊ/ՄՀմ)**

1. Տեղեկատվություն մասնակիցների ներկայացրած հայտերի՝ պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի անհամապատասխանությունների շտկման մասին

1.1 «Մեդիտեք» ՍՊԸ-ին և «Պրոֆտեստ» ՍՊԸ-ին 2019 թվականի հունիսի 19-ին ծանուցվել է որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու վերաբերյալ:

1.2 «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան

1.3 «Մեդիտեք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան **թիվ 3-րդ և թիվ 17-րդ** չափաբաժինների մասով, իսկ **թիվ 1-ին և թիվ 2-րդ** չափաբաժինների մասով անհամապատասխանությունների շտկում «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել, մասնավորապես, **թիվ 1-ին** չափաբաժնի մասով հրավերով սահմանվել է՝ **Օկլյուզիոն ճնշման առնվազն 9 մակարդակ**, իսկ ներկայացվել է **Օկլյուզիոն ճնշման 3 մակարդակ,** և **KVO՝ կարգավորվող, 1ml/h -10ml/h.** «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է **KVO՝ կարգավորվող, 0.1ml/h -1.0ml/h. (չի շտկվել հրավերով սահմանված պահանջի նկատմամբ անհամապատասխանությունը),** և **թիվ 2-րդ** չափաբաժնի մասով հրավերով սահմանվել է՝ **Պոմպի հոսքի արագությունը ոչ պակաս, քան՝ 75մլ/րոպե**, իսկ ներկայացվել է՝ **Պոմպի հոսքի արագությունը 50մլ/րոպե,** և հրավերով սահմանվել է՝ **Սրտի զարկերի հաճախականության տիրույթը ոչ պակաս, քան՝ 18 – 255q/ր,** «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է՝ **Սրտի զարկերի հաճախականության տիրույթը 30 – 300q/ր (չի շտկվել հրավերով սահմանված պահանջի նկատմամբ անհամապատասխանությունը):**

1.4 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 48-րդ կետի դրույթներով **Թիվ 1-ին և 2-րդ** չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հանդիսացող՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել և որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել

հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով և «Խաչպար» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. <<ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

2.1 <<ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները, հանձնաժողովը որոշեց.

- <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կարիքների համար բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել՝

- **N** 3,17 չափաբաժինների մասով << **Մեդիտեք** >> **ՍՊԸ**-ին.
- **N** 18, չափաբաժնի մասով << **ԹԱԳ ՀԷՄ**>> **ՍՊԸ**-ին.
- **N** 12,16 չափաբաժինների մասով << **Մեդտեխսերվիս** >> **ՍՊԸ-ին**.
- **N** 4,9-11,13 չափաբաժինների մասով << **Յունիմեդ Հայ-Ռուսական** >> **ՀՁ ՍՊԸ**-ին.
- **N** 5 չափաբաժնի մասով << **Ար.Մեդտեխնիկա** >> **ՍՊԸ**-ին.
- **N** 8 չափաբաժնի մասով << **Երմեդ** >> **ՍՊԸ**-ին.
- **N** 6,7 չափաբաժինների մասով <<**Պրոֆտեստ** >> **ՍՊԸ-ին**.

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ թիվ 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 16, 17, 18 չափաբաժինների մասով հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանել անգործության ժամկետ:
- Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. <<ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

- Ծանուցել **թիվ 1-ին** չափաբաժնի մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ին ,առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

- Ծանուցել **թիվ 2-րդ** չափաբաժնի մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «Խաչպար» ՍՊԸ-ին ,առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. **Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները**

Հանձնաժողովի նախագահ՝ _____ (ստորագրությունը) **Լ.Դանիելյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ (ստորագրությունը) **Ա.Հակոբյան**

_____ (ստորագրությունը) **Կ.Մկրտչյան**

_____ (ստորագրությունը) **Մ.Գրիգորյան**

_____ (ստորագրությունը) **Է.Միրոյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ (ստորագրությունը) **Գ.Ադամյան**